Մրցույթ՝ ՀՀ Շիրակի մարզի «Նահապետավանի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի Տեխնոլոգիայի (2 դասաժամ), Իմ հայրենիքը և աշխարհը (2 դասաժամ), Իմ հայրենիքը (2 դասաժամ), Ինֆորմատիկա և ԹԳՀԳ (7 դասաժամ), Մաթեմատիկայի (19 դասաժամ), Կերպարվեսի (4 դասաժամ), Դասվար (7 դասաժամ) ուսուցչի թափուր տեղերի համար

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՄՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝
- դիմում (ձև 1),
- 1 լուսանկար 3x4 չափի,
- բարձրագույն կրթությունը հաստատող փաստաթուղթ (դիպլոմ),
- անձը հաստատող փաստաթուղթ,
- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),
- ինքնակենսագրություն (ձև 5),
- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,
- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են հունվարի 18-ից մինչև մարտի 3-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 09 :00-ից 15:00-ն, բացի շաբաթ, կիրակի և ոչ աշխատանքային այլ օրերից:

Մրցույթը տեղի կունենա **2025 թ. մարտի 5-ին՝ ժամը 15:00-ին**, Նահապետավանի միջնակարգ դպրոցում, հասցե՝ Արթիկ համայնք, բն. Նահապետավան 3-րդ փողոց, 2-րդ փկղ, շենք 1:

Տեղեկությունների համար զանգահարել 077 08 93 04 հեռախոսահամարով:

Сканировано с CamScanner